ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2023 թվականի N 271 - Ա

«ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022թ. փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 15-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Առողջապահության նախարարության 2023 թվականի հուլիսի 24-ի ՎԳ/05/16992-2023 գրությունը.

ո ր ո շ ու մ ե մ.

Հաստատել՝

1.«Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցույթային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. հուլիսի 24
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023 թվականի հուլիսի 24-ի
N 271 որոշման

ԿԱԶՄ

«Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցույթային հանձնաժողովի.

1.Նարե Ղազարյան - Մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),

2.Նունե Գևորգյան - Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար),

3.Սեյրան Ավետիսյան - Մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ,

4.Ռոբերտ Կոստանդյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ,

5. Քնար Ղոնյան - Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ (համաձայնությամբ),

6. Նունե Փաշայան – Առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ (համաձայնությամբ),

7. Հասմիկ Սարգսյան - Առողջապահության նախարարության ֆինան-սատնտեսագիտական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (համաձայնությամբ):

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան